Շրջանառության մեջ է դրվում ՀՀ նոր հուշադրամ

02.11.2026

2026 թվականի նոյեմբերի 3-ին ՀՀ կենտրոնական բանկը շրջանառության մեջ է դնում «Գրիգոր Խանջյանի ծննդյան 100-ամյակ» արծաթե հուշադրամը:

Գրիգոր Խանջյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հուշադրամ

Գրիգոր Խանջյանը հայ անվանի գեղանկարիչ է, գրաֆիկ, մոնումենտալ-դեկորատիվ գործերի հեղինակ, ՀԽՍՀ (1967 թ.) և ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ (1983 թ.), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1990 թ.):
Նրա մոնումենտալ ստեղծագործություններից առանձնանում են հայ ժողովրդի պատմության հերոսական էջերն արտացոլող «Հայոց այբուբեն», «Վարդանանք» և «Վերածնունդ» որմնանկարները (1992–2000 թթ.):

Դիմերես՝ Գրիգոր Խանջյանի «Լեռներում» կտավը (1972 թ., Հայաստանի ազգային պատկերասրահ):
Դարձերես՝ Գրիգոր Խանջյանի դիմապատկերը, Գրիգոր Խանջյանի «Ձոն նկարիչներին» եռանկարի կենտրոնական նկարից դրվագ (1978 թ., Մուրադյան գելըրի, ԱՄՆ):

Էսքիզների հեղինակներ՝ Լուսինե Լալայան (դիմերես), ԷՄՔԵՅ ՍՊԸ (դարձերես):
Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^{0}
Քաշը	28,28 գ
Տրամագիծը	28,0 x 40,0 մմ

Որակը	լավացված
Դրամաշուրթը	հարթ
Թողարկման քանակը	300 հատ
Թողարկման տարեթիվը	2026

Կարդացեք ավելին բաժնում: